

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 4

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի նիստի

կայացած 2014թ. \_ մայիսի \_16\_ \_ ին

մասնակցությամբ հանձնաժողովի \_\_\_5\_\_\_ անդամների:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրելու խնդրանքով Լոռու մարզպետին դիմած քաղաքացիների՝

1. Անգին Գասպարյանի /հասցեն՝ ք. Վանաձոր, Կնունյանց 2/21/
2. Արկադի Նիսալյանի /հասցեն՝ ք. Վանաձոր, Տավրոսի 6/6/
3. Արշավիր Դավաթյանի /հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 79/7/
4. Արագած Աբրահամյանի/ հասցեն՝ Լոռու մարզ, համայնք Դարպաս/
5. Ալվարդ Կոստանդյանի /հասցեն՝ ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ 3/9-5/
6. Սուսաննա Հարությունյանի /հասցեն՝ ք. Վանաձոր, Երևանյան խճ. 141/48/
7. Ռաֆիկ Զուլյանի /հասցեն՝ ք. Վանաձոր, Լազյան 45/13/
8. Վաչագան Մարտիրոսյանի /հասցեն՝ Լոռու մարզ, համայնք Գուգարք/
9. Ռաֆայել Հայրապետյանի / հասցեն՝ ք. Սպիտակ, Փյունիքի 43/

դիմումների քննարկում:

/Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ Ռուզաննա Պողոսյան/

- Ընթացիկ հարցեր:

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

ա/ Ելնելով բժշկական ցուցումներից **բավարարել** քաղ՝ Արկադի Նիսալյանի, Արշավիր Դավաթյանի, Ալվարդ Կոստանդյանի, Ռաֆիկ Զուլյանի դիմումները, նրանց ուղեգրելով

“Վանաձորի բժշկական կենտրոն” ՓԲԸ, իսկ Արագած Աբրահամյանի բուժման համար նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետի միջնորդագիր ուղղված ՀՀ ԱՆ:

բ/ քաղ. Անգին Գասպարյանին պատասխանել, որ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի, N 318 որոշմամ 2-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգի ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 30.00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող անձիք /իր դեպքում ընտանիքի անապահովության միավոր 35.00/ կարող են օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից:

գ/ **մերժել** քաղ՝ Սուսաննա Հարությունյանի և Ռաֆայել Հայրապետյանի դիմումները՝ բժշկական ցուցումների բացակայության պատճառով, իսկ Վաչագան Մարտիրոսյանին պատասխանել, որ բուժումը ք. Երևանի “Նորք Մարաշ” բժշկական կենտրոնում կազմակերպելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀԱՆ:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ. Պողոսյան

քարտուղար՝



Գ. Բոջուկյան